

կրէն ետքը կէս ժամու քալուածքը, այն իանանց՝ որ հանգիստ կեանք մը կը վարեն, և այն մարդոց՝ որ նստողական վիճակի վարժած են, առողջութիւնը վառ կը պահէ ու կեանքը կ'երկընցընէ:

## Մ. ԱՍՏԻՂԻՐՈՒ ՀՈՒԳՈՒՂՈՍ

ՈՂԵԲԵՐԳՈՒԹԻՒԽՆ

(Տես Երես 29:)

## Հ Ա Ն Դ Է Ս

ՏԵՍԻԼ Ա.

ՊՈՊՂԻՈՍ, ՄԱՆԼԻՈՍ

ՄԱՆ. Եկեսցէ Հուեգուղոս, եկեսցէ և լիբէտականն պատգամաւոր (տես Պողպան): Ապա թշնամիք խաղաղութեանց ցանկան:

ՊՈՊ. Եւ կամ թէ փոխանակութեան գերւոյն: Իրացն գիւտ Հուեգուղեայ յանձնէ. Եթէ և ոչ միումն լցի գամագիւտ, հարկ՝ ի վերայ կայ նորա դառնալ ՚ի կարքեգոն, և անդ իւրով արեամբ գոնսաստութեան Հուովմայ հատուցանել վրէժու: Նորա երդուեալ է զյարձն, և կանիսաւ անդէն յակն արկեալ զմեծասաստ չարչարանացն մահառիթ կազմածու: Ա՛հ, քաւ մեղ յայն դժընդակ պատուհաս զայնչափ ոք քաղաքացի....

ՄԱՆ. Լուռ լէր, զի ահա գայ:

ՏԵՍԻԼ Բ

ՀՐԵԳՈՒՂՈՍ, ՊՈՊՂԻՈՍ, ՄԱՆԼԻՈՍ, ԱՄԻԼԿԱՐ

ԱՄԻԼ. (Գաղո): Առ լինչ կաս, Հուեգուղէ. միթէ նո՞ր ինչ իցէ քեզ աեղիս:

ՀՌ. Զայն խորհիմ եթէ զինչ աստի ելի. և զինչ դառնամայսրէն:

ԱՄԻԼ. (տես Բարձրական): Կարքեգունեանն ծերակոյտ ՚ի բաց զահաւորան իւր ցանկացեալ ընկենուլ յահնէնէ զզէնս, ովքոյն առ ծերակոյտ առաքէ Հուովմայ: Եւ թէ Հուովմա առ ՚ի նմանէ խաղաղութեան փափաքէ, և խաղաղութիւն նմա առաքէ:

ՄԱՆ. Անց բազմեաց և մանրախուղիւ ճշգրտեսցին բանք: Եւ դու, Հուեգուղէ, պյտի եկ զառաջինն քո ունել դահ:

ՀՌ. Սակայն նոք ոմանք իցեն սոքա:

ՄԱՆ. Նախարարակոյտն:

ՀՌ. Եւ դու ո՞իցես:

ՄԱՆ. Այդաքի անծանօթ ես բգեշխին:

ՀՌ. Իսկ արդ ընդ նախարարան և ընդ բգեշխ արկից երբէք աթոռ ծառայի:

ՄԱՆ. Օ՛ն անդր. այլ Հուովմ վասն քո զիւրոց

օրինացն մուանայ խստութիւն, փոխանակ ընդ բազմահանգիս քում աշխարհակալութեամցդ: ՀՌ. Հուովմ եթէ մուանայ, ես նմին յուշ ածեմ: ՄԱՆ. (Ըստ ինձն): Պնդագոյն առաքինութիւն, ու ետես երբէք:

ՊՈՊ. (Յառանէ): Ապա և Պոպղիոս մի բազմեացի: ՀՌ. Զի գործես, Պոպղիէ:

ՊՈՊ. Զարժանն. յուն կալհասանէ ինձ ուր ոչ նստի հայրն:

ՀՌ. Ա՛հ. այսչափ ուրեմն ՚ի Հուովմ փոփոխեցան բարոյք. ՚ի գործ հասարակաց զանձին ինչ յիշատակել պարտաւ, յառաջ քան զանցանելն իմ ՚ի լիբայ, յանցանք մեծ էին:

ՊՈՊ. Սակայն . . .

ՀՌ. Բազմեաց, Պոպղիէ. և զգոյշ լէր արժանապէս ունեն զգահճ:

ՊՈՊ. Մեծարանք հօր օրէնք են ընդարդոյս:

ՀՌ. Քո մեռաւ հայր մինչդեռ ՚ի պարտութիւն մասանեցաւ:

ՄԱՆ. Արդ խօսեաց, Ամիլիար:

ԱՄԻԼ. Կարքեգուն զՀուեգուղոս ընտրեաց իւր պատգամաբեր խորհրդոց. բան՝ զոր խօսեացի գա, կարքեգուն և ես բարբառիմ:

ՄԱՆ. Հապա խօսեացի ընդ մեղ Հուեգուղոս:

ԱՄԻԼ. (Գաղո առ Հուեգ): Ցիւէա զի թէ ինչ ոչ վճարեցես՝ երգուար . . . .

ՀՌ. Հատուցից անթերի զերդումն իմ: (Խորհի):

ՄԱՆ. (Գաղո): Զնմանէ է բանն. ո՛հ, զինչ արդեօք խօսեացի:

ՊՈՊ. (Գաղո): Աստուածք Հուովմայ, դուք տուք բան՝ ՚ի շըթունս նորա:

ՀՌ. Կարքեգուն սիսերիմ, ո՛ ակմբահոյլ հայրապէտք, ՚ի պայման ուխտի՝ եթէ զոր այժմն ունի նմա մնասցէ՝ ՚ի խաղաղութիւն զձեղ աղերսէ: Իսկ եթէ խաղաղութիւն ընտրէք ո՞չ զիւրոյ և զձեր գերւոյն ցանկայ գոնէ փոխանակութեամբ կարձել զցաւալից նժդեհութիւն: Զերկոսեանն իսկ զընկենուլ տամ ես խորհուրդ:

ԱՄԻԼ. Զինարդ:

ՊՈՊ. Բարեէ:

ՄԱՆ. Զարմանն մեծ:

ՀՌ. Ոչ ինչ են ինձ պէտք զնամղաղութեանն հրապարակել տոյցմ: Եթէ այդչուփի ցանկացաւ՝ ապա յահ մեծ ընթառնեալ կայ թշնամին:

ՄԱՆ. Իսկ արդ զփոխանակութիւնն:

ՀՌ. Որոդայթ զանփուուլ և դժուարաձեռն լարեալ է զնոյն:

ԱՄԻԼ. Հուեգուղէ . . .

ՀՌ. (Խորհո): Հատուցից զուխտն իմ:

ՊՈՊ. (Ըստ ինձն): Ո՛վ դիք, հայրն իմ կորնչի:

ՀՌ. Աւաշարկեալն փոխանակութիւն բիւր իմն տուգանն յինքն ծրարէ, այլ աղիսագոյն է օրինակն: Փառք և կորով քաջութեան և զինուուրական առաքինութիւն պատանդեցաւ ՚ի Հուովմայ, ով հարք, եթէ միանգամանարի վատին՝ աղատութեան և կենաց արծարծեացի յոյս: Զինչ շահ եթէ գարձից ՚ի Հուովմ՝ որ զծաւայութեանն խարազանին կամպուտակ հարուած ՚ի թիկունս առեալ բերիցէ: որ զգեւուծարաւիս արեան թըննամեաց կենդանեաւ մերկացեալ զզէնս՝ առ ահի մահուն լաւ համարեցաւ զյաղթականին յանձն առնուլ եպերանս:

ՄԱՆ. Իցէ արդեօք փոխանակութիւնդ՝ վխասա-

բեր. սակայն Հռեգուղոս միայն շատ է 'ի վա-  
սուն փոխարինութիւն:

Հր. Խարիս, Մանլիէ. և Հռեգուղոս մարդ է  
մահկանացու. զգամ և ես զտառապանս հասա-  
կի. օգուտ սակաւ ինչ է իմ այսուհետեւ Հռով-  
մայ, սակայն բազում ինչ գտանէ Կարքեղոն 'ի  
մանկունս իւր արիս, զոր ընդ իմարձակիցեք:  
Ա՛հ, քան 'ի ձենջ վրիպակդ անհնդեգ: Գընտիրս  
յիմոց աւուրց վայելեցին իմս հայրենիք. թող  
կալցի թշնամին զնշիարն անպիտան: Թող պան-  
ծասցի զանարդ յաղթանակ մահուս, սակայն և  
տեսցէ թէ 'ի զուր յաղթանակէ. զի յոգունս  
սնուցանէ Հռեգուղոս երկիրս Հռովմայ:

ՄԱՆ. Ո՛վ անսալզապ միոք:

ՊՈՊ. Բնակէ մահազեկոյց արութեանն:

ԱՄԻԼ. Նոր լեզու, յինէն անծանօթ:

ՄԱՆ. Սակայն ոչ զօգուտ միայն գործոց ինդրելի  
է մեզ, այլ և զարժանն. իսկ արդ՝ ոչ անարժան  
ինչ կը Հռովմայ անձանաշող գտանել իւրունն  
քաղաքացւոյ:

ՀՐ. Հռովմ ինձ շնորհս ինդրէ հատուցանել. ես  
ցուցեց ճանապարհ: Այս բարբարոսք, ու աւա-  
գանի, այսպէս անարի զանձն իմ գատեցան, որ-  
պէս զի առ երկիւղի մատն լինել ձեզ փութայ-  
ցեմ: Ա՛հ, գտան է ինձ այս թշնամանք քան զա-  
մենայն բախմունս՝ որոց տարայ կտանաց: Աղէ  
հարք, պահանջեցէք զվերէ իմ. Հռովմայեցի ե-  
ղեալ եմ և ես. հաւա ՚ի զէն վառեցայք, ըն-  
թացէք թափել 'ի տաճարաց նոցին զգերեալ ար-  
ծուիս Հռովմայ. չե նախանձաւորին նկուն ե-  
ղեալ՝ մի ամփոփեցէք զուրդ. տուք ինձ 'ի գար-  
ձին իմում անդր՝ 'ի ճակատս գահճացն իմոց ըն-  
թեւնուշ զարհաւիրս սրամութեան ձերոյ, զի  
ինդակին մեռայց, նշմարեալ յոգւոցս պարզել  
եթէ զիարդ յանուանէն Հռովմայ սարսիցի լի-  
րիս:

ԱՄԻԼ. Հիացումն զոգիս իմ թափէ:

ՊՈՊ. Ա՛հ, սիրտ իմ անկաւ. չտայ ոք պատաս-  
խանի:

ՄԱՆ. Տարակոյս մեծ այսպիսի զգուշագունի ևս  
կարօսի խորհրդոյ. ժամ առցուք և մեք սթա-  
փել յարժանաւոր հիացմանէ մատց: Առցես  
դու ընդ հուպ, Ամիլկար, զպատգամն ծերակու-  
տին: իսկ մեք խորհրդականք առարինիք՝ ձեւպես-  
ցուք նախ քան զամենայն զաստուածոցն 'ի վե-  
րայ մեր մաղթել հովանի: (յառնէ):

ՀՐ. Դեռ ևս տարակուսանք են:

ՄԱՆ. Եւ կարի յիրաւունս, Հռեգուղէ. իմ վա-  
րանին միտք եթէ արդեօք առաւել իցէ մեզ վր-  
տանդ խոնարհէլ 'ի մէտ խորհրդոցդ, եթէ կո-  
րուսանել զայր՝ որ այսպիսիս մեզ թելադրէ խոր-  
հուրդս քաջութեան: Ազհամարհոս դու մահու՝  
զարիւն քո 'ի վերայ հայրենեացդ մատնես, սա-  
կայն 'ի քեզ զարուորագյունն որդւոց կորուսանէ  
Հռովմ. եթէ մահ ինդրես քեզ առ 'ի նմանէ՝  
շատ ինդրես. ոչ առատաձեռնեն երկինք այսպա-  
նիս արի դիւցազունս: (ելանէ ընդ իւրոն):

ԱՄԻԼ. Այսպէս կատարէ զսոստումն իւր Հռե-  
գուղոս:

ՀՐ. Դառնալ խոստացայ, կատարեցից:

ԱՄԻԼ. Սակայն . . .

## ՏԵՍԻԼ. Դ

ՀՐԵԴՈՒՂՈՍ, ԱՏՏԻՂԻՈՍ, ԼԻԿԻՆԻՈՍ.  
ՊՈՊԴԻՈՍ, ԱՄԻԼԿԱՐ

ԱՏ. (պապա ընդ լին): Հայր . . .

ԼԻԿ. (պապա): Դիւցազմնեդ . . .

ԱՏ. և ԼԻԿ. ի վերայ ձեռինդ այդորիկ . . . (կամբա-  
կամբարէլ):

ՀՐ. ի բաց կացէք. օրհնեալ են դիքն. չե ևս եմ  
ազատ:

ԱՏ. Հերբեցան ուրեմն փոխանակութիւնն:

ՀՐ. Պոպզիէ, տար զմեզ 'ի վանս պատրաստեալ  
Ամիլկարայ և ինձ:

ՊՈՊ. Եւ ոչ առ հայրենի զարմնդ գայցես 'ի բնա-  
կութիւն քո առաջնին:

ՀՐ. Թշնամի պատգամարեր 'ի Հռովմ ոչ մտանէ:

ԼԻԿ. Այդ օրէնք սասակութեան ոչ վամն քո ինչ են:

ՀՐ. Եթէ չեր հասարակաց՝ բոնաւորական էր:

ԱՏ. Գոնեայ ընդ քեզ եկից ես յոր վայր և եր-  
թիցես:

ՀՐ. Ոչ, ոչ. քան զհօր և որդւոյ խանդակալ գո-  
րով զայլ ինչ խորհնել է առ ժամս:

ԱՏ. Ընդէր, հայր, այլափոխեցար այդպէս յըն-  
տանի քո բնութենէդ:

ՀՐ. Բազդն իմ եղե այլափոխ, ոչ ես: ի գելա-  
րանս կամ 'ի գափինս զհանդիսաւ իմ ես ոչ վեր-  
գովեմ. գերութիւնս իմ 'ի սիրտ ոչ հասցէ. ընդ  
յեղյեզուկ բաղդին զըմբազ՝ բազմագիմի մրցի ա-  
ռաքինութիւնն: (ելանէ):

## ՏԵՍԻԼ. Դ

ՄԱԳՈԽ, ԱՄԻԼԿԱՐ և առաջնուն:

ԱՄԻԼ. Ամիլկար:

ԱՄԻԼ. Ողջյն ընդ ձեզ. ելանեմ զհետ Պոպզեայ:

(առ ՄԱԳ.): Ա՛հ, քանի ինչ ունիմ ասել քեզ,  
սակայն . . .

ՄԱԳ. Սակայն ոչ ինչ ասես:

ԱՄԻԼ. Կարդագու զբազդն, և քաւեսջիր: (ելանէ):

## ՏԵՍԻԼ. Ե

ԱՏՏԻՂԻՈՍ, ՄԱԳՈԽ

ԱՏ. Դէպք սքանչելի. հայրն մեր իւրում անձինն  
միտսու կայ դաշնաւոր:

ՄԱԳ. Այլ քանզի չե ինչ սահմանեալ է աւա-  
գանւոյն՝ ակնկալութիւն բազում է քեզ, Ամ-  
տիղիէ: Ծնթա, գուն գործեա, խօսեաց, մինչ  
չե իցէ նախարակայան պարունակեալ միւսան-  
դամ: Այժմ է ժամանակ ճարտարութեան խօ-  
սից և ճնարագէտ իմաստութեան. մերթ 'ի գութ  
ընտանեաց բողոքել, մերթ 'ի սէր սիրելեաց,  
մերթ 'ի զօր զըրութիւն Հռովմայ:

ԱՏ. Յանձն առնում զամենայն, սակայն ակնկա-  
լութիւն իմ հատաւ: Թուեր ինչ 'ի ծոց նաւա-

հանգստին ալեքն յստակ, և երկինք պայծառ.  
բայց սեաւ մըրիկ յափշտակէ զիս յանդունդս:  
Արտաքի թուլանամ, սակայն արժանի ներու-  
թեան եմ, զի յուղողին յիշտատակաւ սպառն-  
թաց սիրտ իմսասանի: (Ելուե):

## ՏԵՍԻԼ Զ

### ՄԱԳԻՆ

Զիմարդ գժոխըմբեր իցէ բաղդս, եթէ միւսան,  
գամ Ամիլկար առանց իմ դարձ արասցէ 'ի Կար-  
քեդոն: Ի խորհելն միայն թուիմ ինձ . . . ա՞ս  
ոչ ևս գոյ ակնկալել ոչ պակաս են մեզ ժամա-  
նակը ցաւոց: Ոչ իմաստութեան ինչ մահկանա-  
ցուաց՝ այլ անմտութեան է դժնդակ արուեստ՝  
չարեաց նախագուշակ լինել անձին: Տիպ կեր-  
պարանաց չարի՝ յերկիւղէ կերպարքեալ՝ ի միտո  
դիւրախաբս՝ 'ի վեր է միշտ քան զշմարտութի:  
Որ անմտութեամբ չարիս ստեղծանէ՝ 'ի վիտո  
ձեպէ, և զկեղակարծելին ձշմարտէ վիտո:

Կը շարունակոյ:

## Ա.ՂԵՐՄԱՆԴԻ ՏԻՒՄԱ

Անցեալ տարւոյն դեկտեմբեր ամ-  
սուն 5ին գաղղիոյ Տիէր քաղաքը կնքեց  
իւր կեանկն, որդւոյն քով, եւրո-  
պայի ամենէն բազմաբեղուն և ամե-  
նէն ժողովրդական վիպասանն Աղեք-  
սանդր Տիւմա: Չկայ ազգ մը որ անունը  
լած չըլլայ, ինչպէս մեր մէջ ալ թարգ-  
մանուած կան իր վիպասանութիւննե-  
րէն:

Ծներ էր յամին 1803, տարի մը ետքը  
քան զլիկտոր Հիւկոյ. Հայրն էր Աղեք-  
սանդր Տավի-Տիւմա հասարակապետա-  
կան զօրավարը, որ էր որդի մարդիզին  
Տավի տըլա Բայէդըոի (Davy de la Pail-  
letterie) և խափշիկ ափրիկուհոյ մը, Դի-  
էնէդ Տիւմա, որուն անուամբն առա-  
ւելապէս ծանօթացած է: Սոյն այս ա-  
նուամբ հոչակուեցաւ դաղղիացի հեղի-  
նակը, որուն դանդուր մազերը կերպա-  
րանքը և շրթունքները կը յիշեցընէին իր  
խափշիկ ծագումն ունենալը: Երեք տա-  
րեկան էր, երբ այրի: մնալով մայրը՝  
Վիլլէրս-Գողգըուէդ իր ծնած քարքին  
մէջ կը մեծցընէր զինքը, ուր պզտիկուց  
շատ չափաւոր կրթութիւն առաւ, բայց  
ընդհակառակն մարմնոյ շարժմանց զօ-  
րաւոր և յաջող վարժութիւն ստացաւ:

Իր մօրը կապուած թոշակէն ուրիշ նը-  
պաստ չգտնալով, քիչ մը ժամանակ նո-  
տարի զրագրութեան ձեռք զարկաւ, և  
քսան տարեկան էր երբ բարիզ գնաց  
բաղդ մը գտնալու: Հոն հօրը բարեկամ՝  
շատ զօրավարաց ապաւինելով, միայն  
Ֆօյ զօրավարէն կրցաւ ընդունելութիւն  
տեսնել, որ օգտի բերաւ անոր գեղե-  
ցիկ դրութիւնը՝ որուն ցոյցերը կու տար  
միայն նոյն ժամանակը, ու զրագիր դրաւ  
զինքը Օոլէանի զքսին քով, տարեկա-  
նը 1200 ֆուանդ: Այս պաշտօնին մէջ  
ինքը զինքը բոլորովին ուսման տուաւ,  
անյագութեամբ կարդաց. առաջ ոտա-  
նաւորի ձեռք զարկաւ, և յամին 1826  
հատոր մը հրատարակեց. ճանչցուց ինք-  
զինքը քանի մը վիպասանութիւննե-  
րով: Իսկ յամին 1829 առաջին յաղ-  
թանակը ձեռք բերաւ իբր թարերգակ  
հեղինակ. վասն զի իր հինգ հանդիսով  
արձակ թատրերգութիւն մը (drame),  
մինչ դեռ ոտանաւոր վիպասանական  
խաղը (romantisme) կը յաղթանակէր,  
մեծ յեղափոխութիւն մը պատճառեց  
հակառակ հին ողբերգութեան բարե-  
կարդ ոճին: Թէատրոնի մէջ եղած ցոյցե-  
րը և Ռասինի դէմ հնչած աղաղակնե-  
րը, յայտնի ըրին հրապարակաւ՝ թէ  
մեծ հաճութեամբ ընդունելի անցեր էր  
ժողովրդեան այս արձակ թատրերգու-  
թիւնը. Օոլէանի դուքսն ալ հոն նըս-  
տած ծափածայն ցնծութեամբ գովեց  
իր զրագիրը, և երկրորդ օրը զինքը զր-  
բապետ անուանեց: Եւ այսպէս մեծ  
յարդ ստացաւ ամենուն առջև իր այս  
մատենագրական նորափայլ հանճարո-  
վը: Տիւմա, Օոլէանի զքսին պաշտպա-  
նութեամբն, որուն առջին աղէկ շնորհը  
զտած էր, արքունեաց մէջ ալ մտնա-  
լու պատիւն ունեցաւ, և 1844ին շքա-  
նշանով թագաւորէն փառաւորեցաւ:  
Նոյնպէս բարեկամութիւն հաստատեց  
Օոլէանեան տան ուրիշ իշխանաց հետ,  
մասնաւորապէս Մոնթանսիէ զքսին հետ,  
որուն ընկերեց՝ 'ի Սպանիա իբր պատ-  
մագիր իր հարսանեացը (1846): Անկէ  
Ափրիկէ անցաւ և նորէն յետոյ բարիզ  
եկաւ 1848ին յեղափոխութեան ատեն-